

ԱՐԱՐԱՏ

ԹԻՒ Ժ.Ա. — ՇՐՋԱՆ Ժ.Ը. 1885 ՏԱՐԻ Ժ.Է. ՆՈՅԵՄԲԵՐ 30

ՍՍՌ ԳԱԱ Է
1952 թ.

ՍՈՒՐԲ ՕԾՈՒՄՆ

Սուրբ օծումն որպէս Հոգւոյն Սրբոյ շնորհաց զգալի առհաւատչեայ, թէ Մովսիսական օրինաց և թէ քրիստոնէական եկեղեցւոյ մէջ նուիրական պրոմիթիւն դարձած է:

Թագաւորք սուրբ օծմամբ զօրացել և զօրանումն իրանց երկրաւոր բարձր իշխանութիւնը փառաւոր կացուցանել: Քահանայք և քահանայապետք սուրբ օծմամբ զօտեւորեալ՝ Աստուծոյ տան վերակացու և աստուածային խորհրդոց հազարապետ կարգուած՝ ժողովրդին դաստիարակումն աստուածային օրինաց:

Ահարոն՝ Աստուծոյ նուիրուեց Մովսիսի ձեռքով օծմամբ և Հին Իսրայէլի քահանայապետական

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ստեփանակերտ

digitised by A.R.A.R.@

խոյրը կրելով՝ որի ճակատին փայլումէր Աստուծոյ անունը. սուրբ օծմամբ Աստուծոյ նուիրուեցին և քահանայապետական խոյրը կրելով խորանի սպասաւորութեան և իսրայէլեան ժողովրդի փրկագործութեան քահանայապետ դարձան նորա յաջորդները։

Սուրբ օծմամբ Դաւիթ հովուութիւնից ի թագաւորութիւն ամբառնալով՝ Իսրայէլի փառաց և զօրութեան հիմը դրեց. նոյն օծմամբ զօրացան և նորա յաջորդները։

Սուրբ օծմամբ թագաւորք քրիստոնեայ ազգաց բարձրանումեն իրանց նախորդների գահը և իբրև Օծեալ Տեառն՝ անձեռնմխելի են.

Սուրբ օծմամբ մեր հաւատոյ հայր սուրբ Գրիգոր Լուսաւորիչ քահանայապետական խոյրն ի գլուխ՝ յաղթանակ կանգնեց հեթանոսութեան դէմ քրիստոնէութեան հաւատոյ լոյսը ճառագայթելով Հայաստանի ամենայն կողմերը. նոյն օծմամբ գօտևորեալ յաջորդք սրբոյ Հոգոյ մերոյ Գրիգորի Լուսաւորչի—հայրապետք Հայաստանեայց եկեղեցւոյ հաւատոյ նահատակ հանդիսացած՝ հաւատն ու եկեղեցին և եկեղեցով ազգը փրկեցին բարբարոսաց ապականիչ և աւերիչ սրածութիւնից։

Ամոյս 10ին նոյն օծմամբ Տ. Տ. Մակար Սրբազնագոյն Պատրիարքս ամենայն Հայոց նուիրագործուեց լինել քահանայապետ ճշմարիտ աստուածային օրինաց։

Ո՛վ ամենաբարի Աստուած, որ Սուրբ Հոգոյդ շնորհօք լցրիր օծեալ Ահարոնին՝ և նորա օծեալ յաջորդներին Վկայութեան Խորանի սպասաւորութեան և Իսրայէլեան ժողովրդի փրկագործութեան քահանայապետ լինել. որ Սուրբ Հոգոյդ շնորհօք

digitised by A.R.A.R.@

զորացրիր օծեալ Դաւթին և նորա օծեալ յաջորդներին և Իսրայէլի փառաց և զօրութեան հիմն դնելու, որ Հոգւոյդ շնորհօք զօրացրիր և զօրացնումես քրիստոնեայ օծեալ թագաւորներին խաչի դրօշը և նորա փրկագործ զօրութիւնը համատարած անելու. որ Հոգւոյդ շնորհօք գօտեւորեցիր Հայաստանեայցս եկեղեցւոյ առաջին հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսաւորչին և նորա օծեալ յաջորդներին, լից, և այժմ, Սուրբ Հոգւոյդ շնորհօք զնորոգ Օծեալ Հայաստանեայցս Հայրապետ Տ. Տ. Մակար Սրբազնագոյն Կաթուղիկոս, որ Հայաստան ժողովրդեան փրկագործութեան Քահանայապետ լինի և վարէ իւր իշխանութիւնը երկար և խաղաղաւէտ կենօք։

digitised by A.R.A.R.@